ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2019թ. թիվ 376-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ Վ. ԹԵՔԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԹԻՎ 6 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 4, 7, 9, 11, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի Վ.Թեքեյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի և ծնողական խորհրդի նախագահի 23.05.2019թ. գրությունները և ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ղեկավարի 03.04.2019թ. թիվ 204 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշման հավելվածի «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի Վ.Թեքեյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ մասում՝

1. «Մագթաղյան Մարգարիտա» բառերը փոխարինել «Գրիգորյան Ագնեսա» բառերով, «Քալաշյան Արթուր» բառերը՝ «Գիլոյան Ռուզաննա» բառերով, «Թաթոյան Սիրանուշ» բառերը՝ «Մելիքսեթյան Էմմա» բառերով, «Աբրահամյան Հրահատ» բառերը «Սուքիասյան Արթուր» բառերով և «Ղարաքեշիշյան Անուշ» բառերը՝ «Քալանթարյան Լևոն» բառերով:

2. Վերահաստատել մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Գևորգ Բդոյանի թեկնածությունը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. մայիսի 31
ք.Վանաձոր